Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի 2007թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

1. 2007թ. ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի ունեցած ձեռքբերումների մեջ կարելի է մասնավորապես առանձնացնել.

ա) Կենտրոնի մասնակցությունը Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում կազմակերպված «Հայաստանի լեռներում» ցուցահանդեսին՝ կենտրոնի հնագետների կողմից Մեծ Սեպասարի պեղավայրում հայտնաբերված 20 տարաբնույթ նյութերի ցուցադրմամբ:

բ) Հայկաձորի քարանձավային բնակավայրում 2007թ. պեղումներով պատերի կանոնավոր շարվածք ունեցող նոր բնակելի համալիրի բացումը և այստեղից X-XIII դարերին վերաբերող նոր գտածոների մեջ (դրոշմազարդ կարասներ, ջնարակապատ անոթներ, ապակյա և մետաղյա իրեր) դրամական գանձի գյուտը (ղեկ. պ.գ.թ. Լ. Եգանյան):

գ) Մ.թ.ա. I հազարամյակում Ախուրյանի ավազանի ու նրա հարող տարածքների բնակչության՝ էթնոլեզվական հայեցակետից հնդեվրոպական էթնիկ տարր լինելու տեսական հիմնավորումը նոր աղբյուրագիտական փաստերով: Նաև Ախուրյանի ավազանի մ.թ.ա. IV-IIIդդ. պատմության որոշ դրվագների՝ Երվանդ-Արտաշես հակամարտության, Երվանդավանի 201թ. ճակատամարտի տեղորոշման, Երվանդունյաց դարաշրջանի գլխավոր աստվածությունների սրբավայրերի տեղադրության և այլ հարցերի նորովի գիտական մեկնաբանություններ (ղեկ.՝ պ.գ.դ. Ս. Պետրոսյան):

դ) Ալեքսանդրապոլի գավառի XIX դ. երրորդ քառորդի պատմաժողովրդագրական ուսումնասիրության ավարտը (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան):

ե) Կենտրոնի «Գիտական աշխատություններ» ամենամյա ժողովածուի IX հատորի հրատարակումը՝ 13 հրատ. մամուլ ծավալով:

զ) Հոկտեմբերի 19-21-ը Գյումրիում «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» հանրապետական VII գիտաժողովի հրավիրումը 80 մասնակիցներով (նաև արտերկրից) և գիտաժողովի նյութերի հրատարակումը 19 հրատ. մամուլ ծավալով:

2. 2007թ. ՇՀՀ կենտրոնում ամբողջությամբ իրականացվել է բազային ֆինանսավորմամբ «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» գիտական թեմայի (ղեկ. պ.գ.դ., պրոֆեսոր Ս. Հայրապետյան) երրորդ տարվա համար ծրագրավորված աշխատանքը: Թեմայի կատարման մեջ ներգրավված են կենտրոնի 13 գիտաշխատողներ, և ուսումնասիրությունները տարվում են երեք ուղղություններով՝ Շիրակի պատմագիտություն, հնագիտություն և բանագիտություն:

- Հաշվետու 2007թ. կենտրոնում շարունակվել է պլանավորված աշխատանքը Շիրակի հնագույն շրջանի պատմության, մասնավորաբար մ.թ.ա. I հազարամյակի Ախուրյանի ավազանի ցեղային երկրների տեղադրության, քաղաքական պատմության, բնակչության հոգևոր, մշակութային և էթնիկական զարգացումների մի շարք անհայտ դրվագների բացահայտման և դրանց գիտական մեկնաբանության ուղղությամբ: Այս հարցում խմբի կողմից կարևորվել են հատկապես ուրարտական արձանագրությունները և Երվանդունյաց դարաշրջանին վերաբերող անտիկ շրջանի ու հայ մատենագիրների հաղորդումները, որոնք բավականաչափ տեղեկություններ են պարունակում Ախուրյանի ավազանի երկրների տնտեսու-

թյան, ռազմական կարողությունների, տեղադրության, բնակչության էթնոլեզվական պատկանելության, նրա հասարակական կյանքի առանձին կողմերի և առասպելաբանական պատկերացումների մասին: Այս ուղղությամբ 2007թ. կատարված ծրագրային աշխատանքն ամփոփված է հրատարակված 4 ծավալուն հոդվածներում և հանրապետական տարբեր գիտաժողովներում արված 4 հաղորդումներում: Նոր աղբյուրագիտական փաստերի հիման վրա խումբը հիմնավորում է նախկինում առաջ քաշած տեսակետը Ախուրյանի ավազանի ու նրա հարող տարածքների մեծ մասի բնակչության՝ էթնոլեզվական հայեցակետից մ.թ.ա. I հազարամյակում հիմնականում հնդեվրոպական էթնիկ տարր լինելու մասին: Խումբը 2007թ. զգալի տեղ է հատկացրել նաև Ախուրյանի ավազանի մ.թ.ա. IV-III դդ. պատմությանը՝ գիտական նորովի մեկնաբանություն տալով Երվանդ-Արտաշես հակամարտության, Երվանդավանի մ.թ.ա. 201թ. ճակատամարտի տեղորոշման, Երվանդի և Երվազ քրմապետի վախճանի, Երվանդունյաց դարաշրջանի գլխավոր աստվածությունների սրբավայրերի տեղադրության և այլ հիմնախնդիրներին: Այս ուղղությամբ պատրաստվել է մեկ հոդված և արվել են չորս հաղորդումներ հանրապետական երկու գիտաժողովներում:

- Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում զգալի աշխատանք է կատարվել նաև մարզի տարածքի հնագիտական ուսումնասիրության ուղղությամբ: Կատարվել են միջնադարյան մի շարք հուշարձանների և հնավայրերի՝ Տիրաշենի, Վահրամաբերդի, Երազգավորսի, Կումայրիի եկեղեցի-ամրոցների հնագիտական հետախուզություն և չափագրման աշխատանքներ, ինչպես նաև Ախուրիկի եկեղեցու մաքրում և մասնակի պեղում: Սրան զուգահեռ՝ շարունակվել են պեղումները Մեծ Սեպասարում և Հայկաձորի քարանձավային բնակավայրերում: Մեծ Սեպասարում 2007թ. պեղումներով հեռացվեցին նախորդ տարի պեղված հատվածում ուշ միջնադարյան կառույցների փլվածքները, բացվեց դրա տակ պահպանված վաղբրոնզիդարյան շերտը, պեղավայրն ընդարձակվեց դեպի արևելք, հարավ և հյուսիս ուղղություններով, ավարտուն տեսք ստացան համալիրի մեջ մտնող դահլիճը՝ 11.6մ x 3.4մ չափերով, սրբարանը՝ 5.5մ x 4.5մ չափերով, որում հստակեցվեց նախորդ տարիների և նոր գտածոների տեղը և զոհաբերությունների ու նվիրատվությունների մնացորդների ամբողջական պատկերը: Պեղավայրի արևելյան կողմում բացվեց նաև շրջանաձև շարվածք, որի սալահատակի վրա խեցեղենի տարաժամանակյա խառը նյութերի հետ գտնվեցին նաև վաղ բրոնզի դարաշրջանին վերաբերող կայծքարից մանգաղի ներդիր և բրոնզից կնիք-մատանի՝ ձիու գավակին նստած արծվի պատկերով: 2007թ. շարունակվել են պեղումները նաև Հայկաձորի քարանձավային բնակավայրում: Պեղումներով բացվել են դեպի Ախուրյան գետ իջնող հարթակի վրա փորված ջրահեռացման և ֆիլտրացման համակարգ, ինչպես նաև՝ տնտեսական ամբարներ և կենցաղային հորեր: Պեղված առայժմ ամենաստորին հարթակի վրա բացվել է նաև բնակելի համալիրի մի հատված՝ պատերի կանոնավոր շարվածքով: Նոր գտածոների մեջ (դրոշմազարդ կարասների, ջնարակապատ տարբեր անոթներ, ապակյա և մետաղյա իրեր, որոնք վերաբերում են X-XIII դդ.) հատկապես կարևորվում է գտնված դրամական գանձը: Մեծ Սեպասարի և Հայկաձորի 2007թ. պեղումների նախնական արդյունքները հրատարակվել են 2 ծավալուն գիտական հոդվածներում: 2007թ. հնագիտական հետախուզություն կատարվեց նաև Ամասիայի տարածաշրջանի Դարիկ գյուղի վարչական տարածքում (Տվյալների նախնական վերլուծությունը հայտնաբերված նորահայտ հուշարձանը վերագրում է քարիդարյան մշակույթին):
- Բազային ֆինանսավորմամբ ՇՀՀ կենտրոնում իրականացվող «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» ծրագրի շրջանակներում շարունակվել է նաև տարածաշրջանի գյուղերից (Հացիկ, Արևիկ, Սառնաղբյուր և այլն) գրառված բանահյուսական հարուստ նյութի (ժողովրդա-

կան աղոթքներ, հմայություններ, գուշակություններ, հավատալիքներ, սնահավատություններ և այլն) ուսումնաքննությունը էթնոհոգեբանական կտրվածքով: Հստակեցվել է գրառված բանահյուսական նմուշների ժանրային համակարգը, դրանց ուսումնասիրությունը կատարվել է տիպաբանական, կառուցվածքանշանային մեթոդներով: Շարունակվել է աշխատանքը Շիրակի տարածքում ծիսական արարողությունների նշանակությունը, բնույթը, բովանդակությունն ու սիմվոլանշանային համակարգը ամբողջականացնելու ուղղությամբ: Հետազոտության արդյունքում պարզվում է, որ Շիրակի արդի բանահյուսությունը, ավանդական բնորոշիչների առկայությամբ հանդերձ՝ ապրում է ներքին շերտավորման գործընթաց, որը ձևավորում է բանահյուսական նմուշի նոր որակ՝ պահպանելով ավանդականի հիմնական հատկանիշները: 2007թ. նախապատրաստվել է հրատարակման և գտնվում է խմբագրման փուլում կենտրոնի բանագետների կողմից պատրաստվող «Խաչը թիկունքիս, Յոթվերքը՝ սրտիս» վերտառությամբ աշխատությունը՝ բանաձևային բանահյուսության նմուշներով, բանասացների կենսագրական տվյալներով, հարուստ բառարանով և ներդիրներով: Բանագետների խմբի 2007թ. կատարած աշխատանքն արտահայտվել է միջազգային 2, հանրապետական 4 գիտաժողովներում արված հաղորդումներով և 2 գիտական հոդվածներով, որոնք հանձնված են տպագրության:

- Հաշվետու ժամանակաշրջանը ավարտական տարի էր ՇՀՀ կենտրոնում թեմատիկ ֆինանսավորմամբ կատարվող երեք գիտահետազոտական ծրագրերի համար.

1. *«Շիրակի ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության ավանդույթներն ու արդի միտումները»* գիտական թեմայի (ղեկ.՝ բ. գ. դ., պրոֆեսոր Ս. Հայրապետյան) շրջանակներում 2007թ. կատարվել են բանահավաքչական (ժողովրդական շուրջ 100 երգային և նվագարանային նմուշների ձայնագրումներ մարզի տարածքում), արխիվային (ԳԱԹ-ի Ն.Տիգրանյանի, Շերամի, Պ.Մոճոռյանի ֆոնդեր) և գիտահետազոտական (9 հոդվածներ հանրապետական և արտերկրի գիտական հանդեսներում, 4 հաղորդումներ երկու միջազգային և երկու հանրապետական գիտաժողովներում) աշխատանքներ: Բանահավաքչական նյութերի ուսումնասիրության ընթացքում հիմնովին բացահայտվել են ժողովրդական երգերի ժամանակակից կատարումների առանձնահատկությունները, ժանրային և երաժշտաոճական բնորոշ գծերը: Ավարտման փուլում է գտնվում աշուղ Շերամի կյանքին ու երգաստեղծությանը նվիրված աշխատությունը: Կատարող խմբի կողմից իրականացված մեծածավալ հավաքչական աշխատանքներում տեղ են գտել նաև մուղամների արդի կատարումների գրառումներ՝ XX դարասկզբին Ալեքսանդրապոլում գրառվածների հետ համեմատելու նպատակով: Թեմայի իրականացման շրջանակներում կազմակերպվել են երկու բանահավաքչական գիտարշավներ, որոնցից մեկը նվիրվել է մարզում բնակվող եզդիների երգային բանահյուսական նյութի գրառմանը:

2. *Ալեքսանդրապոլ- Լենինական- Գյումրի քաղաքի պատմազգագրական ուսումնասիրությունը.»* թեմայի (ղեկ՝ պ.գ.թ. Կ. Բազեյան) ամփոփիչ երրորդ տարում ավարտվել է պատմական սկզբնաղբյուրների և արխիվային նյութերի հավաքման և դասակարգման ծրագրավորված աշխատանքը: Քաղաքի սոցիոնորմատիվ մշակույթը ներկայացնելու նպատակով կատարող խումբը հաշվետու տարում ուսումնաքննության է ենթարկել քաղաքային արհեստներին ու դրանք ներկայացնող աստիճանակարգությանը, քաղաքի կյանքում XIX դ. երկրորդ կեսից XX դ. կեսերը արևմտաեվրոպական ու ռուսական կենցաղամշակութային տարրերի ու երևույթների ներթափանցմանը, էթնիկական վարքագծային նորմերին ու կարծրատիպերին վերաբերող հիմնախնդիրները: Կազմակերպվել են ազգագրական երկու գիտարշավներ՝ հստակեցնելու քաղաքի ներկայիս էթնոժողովրդական պատկերը, ներէթնիկ

գործընթացների առանձնահատկությունները: Հաշվետու ժամանակահատվածում խումբը հրատարակել է 10 գիտական հոդվածներ հանրապետության և արտերկրի տարբեր գիտական հանդեսներում, հաղորդումներով մասնակցել միջազգային և հանրապետական 6 գիտաժողովների, թեմային առնչվող գիտահանրամատչելի հոդվածներով հանդես է եկել տեղական և հանրապետական մամուլում:

3. «*Արևելյան Շիրակը XIX դարում և XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)*» գիտական թեմայի գծով (ղեկ.՝ պ.գ.թ. Ա. Հայրապետյան) 2007թ. ՀՀ Ազգային, ԳԱԱ ՊԻ արխիվների, ԳԱԱ Հիմնարար և ՀՀ Ազգային գրադարանների և տեղական թանգարանային հավաքածուների ֆոնդերի հարուստ տվյալների հիման վրա կատարվել է գավառի պատմաժողովրդագրական վիճակի հետազոտությունը XIXդ. երկրորդ կեսից մինչև XXդ. սկիզբը՝ դրանով ամբողջացնելով Արևելյան Շիրակի ավելի քան մեկդարյա պատմության գիտական ուսումնասիրությունը: Անհրաժեշտ ծավալի աշխատանք է կատարվել Արևելյան Շիրակի XX դարասկզբի սոցիալ-տնտեսական, մշակութային, հասարակական կյանքի և ռազմաքաղաքական իրադրության հանգամանալի ուսումնասիրության ուղղությամբ՝ գրեթե ավարտին հասցնելով «Ալեքսանդրապոլի գավառի պատմությունը» վերնագրով արխիվային նյութերի և փաստաթղթերի ժողովածուի առաջին հատորի հրատարակման նախապատրաստությունը: Կատարող խմբի կողմից 2007թ. հրատարակվել է մեկ մենագրություն, տպագրվել են 12 գիտական հոդվածներ: Խմբի անդամները հաղորդումներով մասնակցել են հանրապետական 5 գիտաժողովների:

4. ՇՀՀ կենտրոնի կողմից 2007թ. հրապարակումների ցուցակը

N	հեղինակ	աշխատանքի անվանում	հրատարակությունը	հրատարակման վայրը	էջ
1	2	3	4	5	6
1	Ս. Հայրապետյան	Շարունակվող երթ	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	3-6
2	Ս.Պետրոսյան	Անձավի ուրարտական վահանի առյուծների զույգը	«Պատմաբանասիրական» հանդես, թ.1	Երևան	17-21
3	Ս.Պետրոսյան	Եռադասության մի դրսևորում ուրարտուն զինված ուժերում	ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	7-9
4	Ս.Պետրոսյան	Գյումրու ուրարտական գոտու բեկորի մեհենագրությունները	ՇՊՄԺ հանրապետական VIIգիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	43-50
5	Ս.Պետրոսյան	*Աս արմատով բառերի պաշտանմունքային բնույթի մասին	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	60-66
6	Ս.Պետրոսյան	«Գիլգամեշը խուլուպու ծառը» վիպերգի հնդեվրոպական-հայկական բաղադրատարրերը	«Պատմաբանասիրական հանդես» (հանձնված է տպագրության,2008, թ.1)	Երևան	0.8մ
7	Ս.Պետրոսյան	Հնդեվրոպական հայկատակ բաղադրատարրը «Գիլգամեշ» դյուցազնավեպում	ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, հ. 10)	Գյումրի	0.8մ
8	Ս.Պետրոսյան	Գորգի, Բանան և Դավիթ եռյակը եռադասության տեսանկյունից	ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր (հանձնված է տպագրության, 2007)	Գյումրի	0.9մ
9	Հ. Հարությունյան	Մուղամների մշակումները Ն.Տիգրանյանի ստեղծագործության մեջ	«Հայ պրոֆեսիոնալ երաժշտարվեստը և Գյումրին» երաժշտագիտական հոդվածների ժողովածու	Գյումրի	100-105

10	Հ. Հարությունյան	Որոշ դիտարկումներ Ալեքսանդրապոլ–Շուշիի երաժշտական աղերսների շուրջ	Շուշիի ազատագրման 15-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (հանձնված է տպագրության, 2007)	Շուշի	0.4 մ
11	Հ. Հարությունյան	Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը Պետրոս Մոճոռյանի ձեռագիր հուշերում	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.8մ
12	Հ. Հարությունյան	Շերամի երգարվեստը և Ալեքսանդրապոլի քաղաքային երաժշտությունը	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.6մ
13	Հ. Խաչատրյան	Շիրակի հնագիտական ուսումնասիրությունը երեկ և այսօր	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր,	Գյումրի	6-11
14	Հ. Խաչատրյան	Բենիամինի անտիկ դաստակերտի հիմնադրման հարցի շուրջ	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	17-19
15	H. Khatchatrian	*La section de Chirak de la route transitaire Artashat-Sebastapolis*	Routes du monde et passages obliges colloque international	France	29-33
16	Լ. Եգանյան	Պաշտամունքային նորահայտ կոթողներ Շիրակջց	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր,	Գյումրի	25-34
17	Կ. Սահակյան, Կ. Գալոյան	Գյումրու նոր բրենդը՝ որպես Հոր Երանելու բարդույթի հաղթահարման մջջոց,	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	179-184
18	Կ. Սահակյան	Ժողովրդական պատկերացումների էթնոհոգեբանական դրսևորումները հետաղետյան շրջանի երազներում (արքետիպ, ծես, հավատալիք),	Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ միջազգային երկրորդ գիտաժողով	Ծաղկաձոր	153-162
19	Կ. Սահակյան, Ա. Սառաջյան	Շուշիի հաղթանակը՝ որպես զոհի բարդույթի հաղթահարման ֆենոմեն	«Շուշին քաղաքակրթության օրրան» հանրապետական գիտաժողովի նյութեր (հանձնված է տպագրության, 2007)	Շուշի	0.5մ
20	Ռ. Հովհաննիսյան	Խոսքի պատկերավորման համակարգն ու արտահայտչամիջոցներն Ա. Ավդալյանի բանաստեղծությունում	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	263-267
21	Ռ. Հովհաննիսյան	Նոր ժամանակի գեղարվեստական անդրադարձը ազատամարտիկ բանաստեղծների երգաստեղծությունում	«Շուշին քաղաքակրթության օրրան» հանրապետական գիտաժողովի նյութեր (հանձնված է տպագրության, 2007)	Շուշի	0.4մ
22	Ա. Հայրապետյան	Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքը XIX դարի 50-70-ական թվականներին	Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, հ. 8	Երևան	189-197
23	Ա. Հայրապետյան	Արևելյան Շիրակի վարչաքաղաքական իրավիճակը XVI-XVIII դարերում	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր,	Գյումրի	91-97
24	Ա. Հայրապետյան	Նոր վավերագրեր Ալեքսանդրապոլի գավառի XIX դարի 60-ական թվականների ժողովրդագրական դրության մասին	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.8մ
25	Լ. Աթանեսյան	Հակոբ Անանիկյան	Արվեստ և ժամանակ, հ. 1	Գյումրի,	22-25
26	Լ. Աթանեսյան	Գյումրեցի նկարիչներ. Գևորգ Բրուտյան	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	238-245
27	Լ.Աթանեսյան	Շանթ Սարգսյան	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)		0.4մ

28	Հ. Ափինյան	Դիտարկումներ Շիրակի ժողովրդական երաժշտության ուսումնասիրման խնդրի շուրջ	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	234-236
29	Հ. Ափինյան	Աշուղ Շերամի ինքնակենսագրությունը	Բանբեր Հայաստանի արխիվների	Երևան	64
30	Հ. Ափինյան	Գյումրու քաղաքային երգարվեստը հայ կոմպոզիտորների տեսադաշտում,	«Հայ պրոֆեսիոնալ երաժշտարվեստը և Գյումրին» երաժշտագիտական հոդվածների ժողովածու	Գյումրի	էջ 40-45
31	Կ. Բազեյան	Թաշկինակը հայոց ամուսնաընտանեկան ծեսերում	Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ, մրջազգային երկրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու	Երևան	113-121
32	Կ. Բազեյան	Ալեքսանդրապոլի թաղային կռիվները	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	142-146
33	К. Базсян	Особенности интерьера городского жилища Александрополя	Археология, этнография и фольклористика Кавказа, Материалы международной научной конференции	Махачкала	с. 265
34	Կ. Բազեյան	Ասեկոսեների և բամբասանքի կենցաղավարումը Լենինականում	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.7մ
35	Կ. Բազեյան	Շուշիի ասեղնագործական դպրոցը,	Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր	Շուշի	0.5մ.
36	Գ. Աղանյան	Համքարությունների տեղը հայոց սոցիո-նորմատիվ մշակույթում (Ալեքսանդրապոլի օրինակով)	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	138-142
37	Գ. Աղանյան	Մշակութային էկոլոգիայի հիմնահարցերը Գյումրիում	Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ, մրջազգային երկրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու	Երևան	197-204
38	Գ. Աղանյան	Երկաթը և երկաթագործական առարկաները հայոց հումանիտար մշակույթում	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.6մ
39	Ա. Բոյաջյան	Հայրենադարձությունը Լենինականում 1946-1947թթ. (ըստ ՀՀ ԱԱ Շիրակի տարածքային բաժնի նյութերի)	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	165-170
40	Ա. Բոյաջյան	Շիրակի մարզի գյուղատնտեսության վերլուծության փորձ	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.5մ
41	Գ. Այվազյան	Ագրարային հարաբերությունները Ալեքսանդրապոլի գավառում XIXդ. վերջին	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր,	Գյումրի	102-108
42	Լ. Պետրոսյան	Երվանդավանի ճակատամարտը և դրա հետևանքները	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր,	Գյումրի	66-73
43	Լ. Պետրոսյան	Երվանդունի- Բագրատունի հակամարտության պատմական հենքը	ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	0.5մ
44	Լ. Պետրոսյան	Հայաստանի սատրապ Օրոնտես-Երվանդի փոխհարաբերություններբ դիադոքոսների հետ	ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու (հանձնված է տպագրության, 2007)	Գյումրի	0.5 մ

45	Լ. Պետրոսյան	Երվանդունյաց դարաշրջանի Հայոց վերջին քրմապետը	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.6 մ
46	Ս. Պետրոսյան Լ. Պետրոսյան	Հայոց Արշամ թագավորը (գործունեության ուրվագիծ)	ԳՊՄԻ հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու	Գյումրի	0.6մ
47	Կ. Ալեքսանյան	Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1918-20թթ.,	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	108-114
48	Կ. Ալեքսանյան	Ալեքսանդրապոլի հասարակական կազմակերպությունների որբախնամ գործունեությունը 1915-18թթ.	ՇՊՄԺ հանրապետական VII գիտական նստաշրջանի նյութեր	Գյումրի	118-123
49	Կ. Ալեքսանյան	Կրթական գործի կազմակերպումը Ալեքսանդրապոլի գավառում 1918-1920թթ	ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.8մ
50	Կ. Ալեքսանյան	Հայաստանի հանրապետության կենտրոնական և Ալեքսանդրապոլի տեղական իշխանության մարմինների հարաբերությունները 1918-1920թթ.	ԳՊՄԻ տարեկան հանրապետական գիտաժողովի նյութեր (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Գյումրի	0.7մ.
51	Կ. Ալեքսանյան	Խորհրդային իշխանության հաստատումն Ալեքսանդրապոլի գավառում (1921թ. ապրիլ-դեկտեմբեր) փաստաթղթերի հավաքածու	Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 1, (հանձնված է տպագրության, 2007, հ. 10)	Երևան	0.8մ

5. Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ,
տնօրեն՝ բ.գ.դ., պրոֆեսոր Սերգո Արտուշի Հայրապետյան,
գիտքարտուղար՝ արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հայկի Հարությունյան
ՇՀՀ կենտրոնի հասցեն՝ ք. Գյումրի, Գորկու 62, հեռ.՝ (0312) 3 31 73, e-mail : lkentron@mail.ru

6. Տվյալներ կադրերի մասին
ա) -
բ) - 1
գ)

N	Ազգանուն անուն հայրանուն	ծննդյան թիվը	պաշտոնը	հաստիքը դր.	գիտական աստիճանը
1	Հայրապետյան Սերգո Արտուշի	1952թ.	տնօրեն	1	բան. գիտ. դոկտոր
2	Հարությունյան Հասմիկ Հայկի	1962թ.	գիտքարտուղար	1	արվ գիտ. թեկնածու
3	Պետրոսյան Սարգիս Գարեգինի	1942թ.	առաջատար գիտաշխ.	1	պատմ. գիտ. դոկտոր
4	Սահակյան Կարինե Արամի	1954թ.	ավագ գիտաշխատող	1	հոգ. գիտ. թեկնածու
5	Եգանյան Լարիսա Գրիշայի	1948թ.	ավագ գիտաշխատող	1	պատմ.գիտ. թեկնածու
6	Բազեյան Կարինե Ռազմիկի	1960թ.	ավագ գիտաշխատող	1	պատմ.գիտ. թեկնածու
7	Ալեքսանյան Կարինե Վանիչկայի	1962թ.	գիտաշխատող	1	պատմ. գիտ. թեկնածու
8	Հովհաննիսյան Ռոզա Պողոսի	1961թ.	գիտաշխատող	1	հայցորդ
9	Խաչատրյան Համազասպ Հակոբի	1952թ.	գիտաշխատող	1	
10	Աբաևեսյան Լաուրա Գերասիմի	1950թ.	գիտաշխատող	1	մանկ. գիտ. թեկնածու
11	Աղանյան Գրիգոր Թորգոմի	1962թ.	գիտաշխատող	1	
12	Բոյաջյան Արտաշես Գևորգի	1964թ.	գիտաշխատող	1	
13	Ափինյան Պասմիկ Պարույրի	1957թ.	գիտաշխատող	1	

դ) Համատեղողներ են կենտրոնի 16 գիտաշխատողներից 3-ը:
ե) –

զ) ՇՀՀ կենտրոնի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ Վաստակագրի է արժանացել կենտրոնի տնօրեն Ս. Հայրապետյանը, ԳԱԱ Պատվոգրերի՝ 7 գիտաշխատողներ (Հ. Հարությունյան, Ս. Պետրոսյան, Լ. Եգանյան, Կ. Բազեյան, Կ. Սահակյան, Ա. Հայրապետյան, Հ. Խաչատրյան)

Աղյուսակ 1

Աղյուսակ 2

2007թ. ՀՀ ԳԱԱ թեմատիկայի ամփոփ տվյալներ

N	Գիտական հիմնարկներ	Թեմաների թիվը		
		Բազային ֆինանսավորում	Թեմատիկ ֆինանսավորում	Տնտ. պայմանագրեր
1	2	3	4	5
1	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ	1	3	

Աղյուսակ 3

Ինստիտուտի անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ

N	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1	2	3	4	5
1	Գուսան Շերամ-150 (գիտական ընթերցումներ)	5 ապրիլի	7	
2	Ալեքսանդրապոլ –Շուշի քաղաքային մշակույթի ավանդույթներ (գիտական ընթերցումներ)	18 -19մայիսի ք. Գյումրի	14	
3	ՇՊՄԺ հանրապետական VII գիտաժողով	19-21 հոկտեմբերի ք. Գյումրի	80	15
4	Հայ-իրանական մշակութային կապեր. մուղամաթի արվեստը (գիտական ընթերցումներ)	8 նոյեմբերի ք. Գյումրի	6	2

Աղյուսակ 4

ԳԱԱ աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ -անդամ երկրներ, կատարած գործուղումները

N	Հիմնարկությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանքն կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
1	2	3	4		5
	ՇՀՀ կենտրոն	ՌԴ (Դաղստան)	1		

Աղյուսակ 5

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ հիմնարկություններում

N	Հիմնարկությունը	Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
1	2	3	4		5
1	ՇՀՀ կենտրոն	ՌԴ	5		
2		Վրաստան	4		

Աղյուսակ 6 --

Աղյուսակ 7

ԳԱԱ գիտաշխատողների 2007 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

N	Հիմնարկությունը	Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումներ թեզիսներ և այլն	
		Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.	Հանրա-պետ.	Արտա-սահմ.
1	2	3	4	5	6	7	8
	ՇՀՀ կենտրոն	1				46	5

Աղյուսակ 8

Ասպիրանտների թվաքանակը

Հիմնարկությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1.01.2008 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն	1	2/2		

Աղյուսակ 9 -

Աղյուսակ 10

ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

N	Հիմնարկությունը	Աշխատողների ընդհանուր թիվը /այդ թվում կանայք/	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը /այդ թվում կանայք/	ԳԱԱ ակադե-միկոսներ /այդ թվում կանայք/	Գիտության դոկտորներ /այդ թվում կանայք/	Գիտության թեկնածուներ /այդ թվում կանայք/
1	2	3	4	5	6	7
	ՇՀՀ կենտրոն	21/14	17/11		2/0	7/6

ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝
բ.գ.դ., պրոֆեսոր Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ա Կ Տ

Գիտական աշխատանքի հանձման-ընդունման

կազմված է « » 200 թ.

Մենք, ներքոստորագյալներս, մի կողմից «Շիրակի հնագիտական և պատմազգագրական ուսումնասիրություններ» թեմայի ղեկավարը՝ ի դեմս ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝ բան. գիտ. դոկտոր,պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի, մյուս կողմից՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա ՊՈԱԿ-ի նախագահ՝ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, համաձայն գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «ՀՀ ԳԱԱ-ԾՁԲ -37» պայմանագրի 5 կետի՝ կազմել ենք սույն ակտը այն մասին, որ թեմայի շրջանակներում կատարված աշխատանքը բավարար է և համապատասխանում է 2007թ. օրացուցային պլանի բոլոր պարտավորություններին:

Պատվիրատու_____ Կատարողը_____

ստորագրություն ստորագրություն